

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	2
1.2	Հապավումներ	2
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	2
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	4
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր	4
1.4.2	Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ	10
1.4.3	Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա	10
1.4.4	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	10
1.4.5	Գազամատակարարում	12
1.5	Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը	13
1.5.1	Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը	14
1.5.2	Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում	15
1.6	Ջրային պաշարների պահպանություն	15
1.6.1	Կոմպրեսորների հովացում	15
1.6.2	Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները	16
1.6.3	Ջրամատակարարում և Ջրահեռացում	16
1.7	Արդյունաբերական թափոններ	17
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	17
2.1	Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	17
3.	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	30
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՅՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	30
4.1	Ռիսկերի գնահատում	30
4.2	Արտանետումների աղբյուրները	31
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	31
4.3.1	Մթնոլորտային օդ	31
4.3.2	Ջրային ռեսուրսներ	31
4.3.3	Հողային ռեսուրսներ	32
4.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	33
4.3.5	Աղմուկ	33
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	25
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	28
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	25
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	26

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «Ասֆալտագործ» ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Շիրակի փողոց թիվ 47/12

1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝

1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Բ.Երևան, Շենգավիթ վարչական շրջան

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ <<Մեյսմաանվտագություն>> ՍՊԸ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու

կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ » ՍՊ-ին պատկանող տարածքում:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Երևան քաղաքի Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ» ՍՊ-ին պատկանող տարածքում նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի նախագիծը մշակվել է <<Սեյսմաանվտանգություն>> ՍՊԸ-ի կողմից, համաձայն նախագծման թույլտվության:

Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր «Ասֆալտագործ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը հաստատող N2771858 տրված 23.02.2011թ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը և 21.10.2019թ տրամադրված N01/18-07/1-Հ-8524-1061 նախագծման թույլտվությունը:

Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ» ՍՊ-ին պատկանող տարածքում նախատեսված է կառուցել հասարակական սպասարկման օբյեկտ, որը բաղկացած է, սեղմված բնական գազով ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշակային կայանից (ԱԳԼՃԿ), սպասարկող շինություններից, շանթարգելներից, հակահրդեհային հիդրանտներից: Ավտոմեքենաների գազալցման ճնշակային կայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Սեղման բնական գազով ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշումային կայանը (ԱԳԼՃԿ) բաղկացած է կոմպրեսորային մոդուլից, տեխնիկական շինությունից, գազակուտակիչ ստորգետնյա բունկերից, օպերատորային շինությունից, ավտոմեքենաների գազալցակետից, հակահրդեհային հիդրանտներից:

Գազակուտակիչ բունկերն իրենից ներկայացնում է 4.00x6.00 մ առանցքային չափերով, 300 մմ հաստությամբ միաձույլ ե/բ պատերով ուղղանկյունաձև ստորգետնյա շինություն, որի ծածկը իրականացվում է մետաղական ծալեղային ֆերմաներից:

Բնական գազի գազալցակետային ռամպան 5.00x36.0 մ միջսյունային չափերով թեթև ծածկով, բարձրությունը՝ -4.50 մ շինություն է:

Կոմպրեսորային մոդուլը 7.00x15.00մ առանցքային չափերով արտադրատեխնոլոգիական մեկ հարկանի մասնաշենք է՝ 4.00 մ բարձրությամբ, պատերը 400 մմ հաստությամբ: Ծածկը իրականացվում է մետաղական ծալեղային ֆերմաներից:

Օպերատորային շինությունները 6.00x6.00 մ + 6.00x3.40 մ և 6.00 x8.00 մ առանցքային չափերով ծառայողական շինություններ են . մեկ հարկանի , բարձրությունը ` 2.70 մ , 400 մմ հաստությամբ պատերով , ե/բ անցքավոր սալերից և ե/բ միաձույլ ծածկով :

Սպասարկող շինությունը 6.00x21.00 մ առանցքային չափերով շինություն է . մեկ հարկանի, 400 մմ հաստությամբ պատերով :

Տեխսպասարկման շինությունը 8.00x18.00մ առանցքային չափերով շինություն է .մեկ հարկանի , 400 մմ հաստությամբ պատերով :

Նախատեսվում է նաև ձայնային և լուսային ազդանշանային համակարգերի տեղադրում , հողանցման համակարգի կառուցում:

Միջբլոկային և միջկոնտեյներային հաղորդակցուղիները մտնում են գործարանային սարքավածների կազմի մեջ և տեղադրվում են համաձայն սարքվածքների հետ ստացվող նախագծերի :

Հակահրդեհային նպատակների համար նախատեսվում է 3 հատ IIIП-B տիպի հակահրդեհային վահանակ , 3 հատ ОП-100 տիպի փոշային կրակմարիչ , 15 հատ փրփրային կրակմարիչ և 15 հատ 1.5 x1.5 մ չափի ասբեստային ծածկոց :

Գազալցակետի հեռավորությունը ճանապարհից – 15 մետրից ոչ պակաս: Գազալցակայանի հեռավորությունը բնակելի և արտադրական շինություններից ըստ գործող նորմերի :

Գազի արտադրատեխնոլոգիական շինությունների հեռավորությունը օպերատորային շինությունից 9 մ-ից ոչ պակաս : Գազալցակետի հեռավորությունը գազակուտակիչ ստորգետնյա բունկերից և կոմպրեսորային մոդուլից ըստ գործող նորմերի :

Նախագիծը մշակված է ճարտարապետաշինարարական գծագրերի , ՀՀՇՆ IV-12.03.01-04, (գազաբաշխիչ համակարգեր) ՇՆՁ IV-12.101-04, Գազաբաշխիչ համակարգերի նախագծում և շինարարություն, շինարարական նորմերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.08.2008 թ. (Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին) N 1101-Ն և ՀՀ կառավարության 22.12.2005 թ. Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում Տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 2399-Ն որոշումների հիման վրա:

Անվտանգության բարձրացման նպատակով «Ասֆալտագործ» ՍՊԸ-ին պատկանող տարածքով անցնող կազմակերպության մերձատար երկաթուղու երկայնքով

նախատեսում է կառուցել $H=3.0$ մ բարձրությամբ, $d=300$ մմ հաստությամբ երկաթբետոնե միաձույլ պատ:

Ընդհանուր տարածքը – 5260.0 քմ

Շենքեր, շինություններ - 908.0 քմ

Ասֆալտապատ տարածք - 3421.0 քմ

Բետոնե սալվածք – 183.0 քմ

Կանաչապատ տարածք – 748.0 քմ

ԱԳԼՃ ԿԱՅԱՆԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է

1. ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԼԻՑԲԱՎՈՐՄԱՆ ԿԵՏ
2. ՇԱՆԹԱՐԳԵԼ
3. ՕՊԵՐԱՏՈՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
4. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ
5. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
6. ԿՈՄՊԼԵՍՈՐԱՅԻՆ ՄՈԴՈՒԼ
7. ԳԱԶԱԿՈՒՏԱԿԻՉ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԲՈՒՆԿԵՐ
8. ՍՊԱՍԱՐԿՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
9. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ
10. ՍՊԱՍԱՍՐԱՀ
11. ՍՊԱՍԱՐԿՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ
12. ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏ
13. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԻՂՐԱՆՏ

ԸՆԴ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՄՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[illegible]





1.4.2 Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 748քմ: Ոռոգման նպատակով ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով: Ջրի պահանջվող քանակը մոտ $748 \cdot 0.003 \cdot 75 = 168$ խմ

1.4.3 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ» ՍՊ-ին պատկանող տարածքում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է հողային աշխատանքների հանույթ և ետլիցք՝ 650 խմ:

Ավելացած հողային զանգված կոգտագործվի տարածքի հարթեցման համար:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 18 մարդ, որից

- Բանվորներ - 15 մարդ
- ԻՏԱ – 3 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Էքսկավատոր՝ 1 հատ
- Բեռնատար՝ 1 հատ
- Բետոնխառնիչ մեքենա՝ 1 հատ
- Ինքնաթափ՝ 1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

1.4.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ 12 խմ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 15 \times 0.025) \times 360 = 152.3 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Զրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 300 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 150

$$U_1 = 300 \times 0.0015 \times 150 = 67.5 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 264.8 խմ/ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կատարվելու է հատուկ նախատեսված ավտոմեքենաներով պայմանագրային հիմունքներով: Տարածքում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

1.4.5 Գազամատակարարում

Համաձայն Գազայրում Արմենիա ՓԲԸ 16.03.2019թ. N02-22/1411 գրության, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի 47/12 հասցեում <<Ասֆալտագործ>>ՍՊԸ, կողմից նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի գազամատակարարումը $O.=1000$ լսմ/ժամ ծախսով և $P=0.3$ ՄՊա ճնշմամբ հնարավոր է իրականացնել «Երևան ԳԲԿ 4» և սնող (Ծպ-100) կողմնատար-գազատարից, որի տեխնիկական պայմաններն են՝

➤ Գործող գազատարում գազի ճնշումը	P_{min} , աշխ. 0.8-1.5 ՄՊա
➤ Գազատարի տրամագիծը $\varnothing$ (մմ)	325
➤ Գազատարի որևէ հատվածի վերականգնման անհրաժեշտություն	չկա
➤ Միացման կետը	«Երևան ԳԲԿ 4» և սնող (Ծպ-100) կողմնատար-գազատար 0.05կմ-ից
➤ Օբյեկտի հեռավորությունը գազատարից	ըստ նախագծային լուծումների գործող նորմատիվների պահանջների
➤ Տեղադրվող գազի հաշվիչ	Ըստ-գազասպառման ծախսերի կահավորված էլեկտրոնային ճշտիչով
➤ Լրացուցիչ պայմաններ	Կառուցել 1. Գործարանային արտադրության , համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան (ԳԲԿ) կազմում պետք է մտնեն՝ ա) փոխմիացման, գազի մաքրման , գազի ճնշման նվազեցման , գազի հաշվառման ,գազի հոտավորման և սեփական կարիքների համար վերցնման հանգույցները բ) էլեկտրասնուցման , կապի կոռոզիայից պաշտպանման , պահպանման և հրդեհային , ձայնա-ազդանշանային , ջրամատակարարման ու կոյուղու համակարգերը , 2. ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար ($P=4.0$ ՄՊա) : 3. ԱԳԼՃԿ-ն սնող միջին ճնշման գազատար : 4. Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի , ինչպես նաև ՀՀ կառավարման 01.15.2009 թ. Թիվ 119-Ն. 08.11.2007թ. թիվ 1438-Ն , 16.07.2015թ. թիվ 787-Ն որոշումների պահանջների համապատասխան և համաձայն բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ :

1.5 Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ /ներառյալ/ սեյսմակայունության, -60°C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960 Պա ձյան բեռի և 441 Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին:

ԱԳՆԿՍ դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ.

Մեթան	-95,01
Էթան	-1,42
Պրոպան	-0,51
Իզոբուտան	-0,05
Իզոպենտան	-0,02
Թթվածին	-0,06
Ազոտ	-2,45
Հեքսան	-0,01
Ծծմբաջրածին	-0,0015 գր/մ ³

Թույլատրված պարունակությունը:

Էթան – մինչև 20%, պրոպան – մինչև 5%, բուտան – մինչև 2%, ազոտ – մինչև 10%, ածխաթթու գազ – մինչև 2%:

Գազի խտությունը, կգ/մ³ – 0,65+0,85:

Նվազագույն ջերմատվությունը – 7920 կկալ/մ³

Խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին – ըստ OCT 51.40-83:

ԱԳԿԿ մուտքին գազի ջերմաստիճանը . $+30^{\circ}$ -ից -5°

ԱԳԿԿ մուտքին գազի ճնշումը. 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

Մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը – 19,6 ՄՊա:

Ելքի 0,8 ՄՊա ճնշման դեպքում ԱԳԿԿ-ի անվանական լիցքավորման հնարավորությունը օրական 250 մեքենա է:

Մեքենան գազով լիցքավորելու ծավալը՝ 60 մմ³ - ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների համար 80 մմ³ - ԶԻԼ մակնիշի ավտոմեքենաների համար:

Մեքենան գազով լիցքավորելու հաշվարկային ծավալը - 70 մմ³

Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է:

ԱԳԿԿ աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ ԱԳԿԿ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է:

Աշխատող կոմպրեսորի ԱԳԿԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է:

Նախագծի տեխնիկական որոշումները համապատասխանում են 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոններին»:

Համաձայն 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոնների»՝ խողովակների վթարային քանակ չի պահանջվում:

Սարքավորումների և խողովակաշարերի վիբրացիայի (տատանումների) մակարդակը համապատասխանում է Ռ-SU 26-12-11-75 «Գլանային օպոզիտային կոմպրեսորներ: Գազի ճնշման տատանման և հաղորդակցման տատանման հաշվարկի մեթոդակարգին» և ԳՈՍՏ 12.2.016-76.ՍՍԲՏ «Կոմպրեսորային սարքավորումներ: Անվտանգության ընդհանուր պահանջներին»:

Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողրակների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԿԿ տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

1.5.1 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին:

Կոմպրեսորային բաժնում գազը մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսորներ: Կայանում տեղադրվելու է Ծօբււ V=500լւմ/Ժււմ, P=250մթււն տիպի երկու հատ ճնշակահին տեղակայումներ: Կոմպրեսորների սառեցումը կատարվում է ջրային եղանակով:

Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ:

Կոմպրեսորային բաժնից գազը տրվում է կուտակիչներ ($V=400\text{լ}$ 10հատ) որտեղից և լցասյունակներ: Կայանում օգտագործվում են հերմետիկ սարքավորումներ, հսկիչ չափիչ սարքեր, ավտոմատ կարգավորիչներ, որոնց շնորհիվ գազի սեղման, չորացման և մաքրման ընթացքում բացառվում են արտանետումները:

Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ճկափողի օգնությամբ: Դճկափողերը միացված են կոմպրեսորների մուտքին և մնացորդային գազը ներքաշվում է կոմպրեսորների մուտքի գծի մեջ:

1.5.2 Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում

Ըստ տեխնոլոգիական գործընթացի մթնոլորտ է արտանետվում բնական գազ, որի հիմնական բաղադրիչն է՝ մեթանը (95.01%) և աննշան քանակներով հոտավորող նյութ՝ էթիլմերկապտան:

1.6 Ջրային պաշարների պահպանություն

Նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից, ջրի միացումը տրված է գործող F=100մմ ջրատարին, համաձայն կնքված պայմանագրի: Ջուրն օգտագործվելու կենցաղային և կոմպրեսորների հովացման համակարգի նպատակով: Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, անհրաժեշտ է նախատեսել ջրի պաշարապահ ծավալ 50լսմ տարողությամբ:

Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի անջրթափանց հոր 40լսմ ծավալով:

1.6.1 Կոմպրեսորների հովացում

Կոմպրեսորների հովացման համար օգտագործվում է ջրային հովացման համակարգ: Ջուրը բաքից պոմպի միջոցով տրվում է կոմպրեսորների սեղման յուրաքանչյուր աստիճանի շապիկ, որտեղից հոսում է ջերմափոխանակիչի միջխողովակային հատված, որից հետո տրվում է ջրի օդային հովացման համակարգ (ABO), վերադառնում բաքի մեջ և նորից տրվում համակարգ:

Շրջանառու ջրի համակարգը փակ կոնտուր է և չունի արտահոսք: Համակարգում հովացման ջրի ընդհանուր ծավալը որոշվում է $V_{\text{հոլ}} = d \times n \times t \times k$ բանաձևով, որտեղ.

d – կոմպրեսորի հովացման համակարգի ջրի ժամային ծախսը, 1,2 մ³,

n – աշխատող կոմպրեսորների քանակը, 2 հատ,

t – աշխատաժամների թիվը տարվա ընթացքում, 8640

k – կոմպրեսորների շահագործման գործակիցը, 0,875:

$V_{\text{հոլ}} = 1,2 \times 2 \times 8640 \times 0,875 = 18144 \text{ մ}^3 / \text{տարի}:$

Հովացման փակ համակարգում կորուստների և համապատասխանաբար համալրման ծախսը կազմում է 1,5 %, որը կկազմի $18144 \times 0.015 = 272.16 \text{ մ}^3 / \text{տարի}:$

Ընդամենը համալրման օրական միջին ծախսը կկազմի՝ 272.16 մ³:

Հաշվի առնելով, որ ջրի լրացումը կատարվում է միանվագ, առավելագույն ժամային ծախսը նույնպես կկազմի՝ 272.16 մ³:

1.6.2 Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները

Աշխատողների կենցաղային կարիքների և խմելու նպատակով ջրօգտագործումը.

$$V_2 = N_1 K_2 T_3 + N_2 K_2 T_4, \text{ որտեղ.}$$

N_1 - հերթափոխի պետ – 6 հոգի,

K_2 - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.016 խմ,

N_2 - սպասարկող անձնակազմ – 21 հոգի

K_3 - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.025 խմ,

T_3 - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը – 360

T_4 - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը - 360

$$V_2 = 6 \times 0.016 \times 360 + 21 \times 0.025 \times 360 = 223.65 \text{ խմ/տարի:}$$

Կորուստները կազմում են – 1.5 %, տարեկան – 3.35 խմ

Արտահոսքը կկազմի – 220.3 խմ/տարի:

Օրական ջրի ծախսը կկազմի 0.61 խմ/օր:

Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռը՝

- Ընդամենը ջրօգտագործում – 223.65 խմ/տարի
- Կորուստ – 3.35 խմ
- Ընդամենը արտահոսք - 220.3 խմ/տարի:

1.6.3 Ջրամատակարարում և Ջրահեռացում

Նախագծային գազալիցքավորման կայանի սանիտարական հանգույցների և հակահրդեհային ջրի միացումը տրված է գործող Փ-100մմ ջրատարին :

Հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջով ջրի քանակության համար , անհրաժեշտ է նախագծել ջրի պաշարապահ ծավալ 50 խմ տարողությամբ ե/բետոնյա ջրավազան , համապատասխան պոմպակայանով : Ջրավազանից ջուրը մղվում է հակահրդեհային դիտահոր , որտեղ նախատեսված է 2 հատ հակահրդեհային Փ-50մմ միացման գլխիկներ :Տարածքում նախատեսված է տեղադրել առաջնային հակահրդեհային միջոցներ :

Գազալցակայանում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կայանում առաջանում են միայն կենցաղային կեղտաջրեր, որոնք սանիտարական-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի

ծավալը կազմում է 40 խմ: Կապված լցվելու հաճախականությունից սեփտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

1.7 Արդյունաբերական թափոններ

Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոններ առաջանում են՝

մուտքային սեպարատորներում - գազը մաքրվում է մեխանիկական մասնիկներից և խոնավությունից,

խոնավագտիչում - գազը մաքրվում է կաթիլային խոնավությունից,

գտիչներում - գազը մաքրվում է յուղից:

Թափոնների քանակը կազմում է 120 կգ/տարի և կազմված են հետևյալ նյութերից.

սիլիկագել - 40 կգ,

յուղ - 80 կգ,

Կոմպրեսորային բաժնում տեղադրված յուղորսիչներում կլանված յուղը հավաքվում է մետաղյա տարողություններում, պահվում է փակ շինությունում և օգտագործվում է գազալցակայանի սարքավորումների շարժիչների յուղման նպատակով:

Թափոնները պատկանում են վտանգավորության III դասին: Բաղկացած են մեխանիկական խառնուրդներից, ջրից, յուղից: Թափոնների ծածկագիրն է՝ 5410021102033: Պահվում են հատուկ մետաղական տարաներում:

Օգտագործված խոնավակլանիչը (սիլիկագել) չի պարունակում որևէ տոկսիկ նյութ և սամծառայության թույլատրությունից հետո կարող է տեղափոխվել քաղաքային աղբանոց:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Շիրակի փողոց թիվ 47/12 հասցեում «Ասֆալտագործ» ՍՊ-ին պատկանող տարածքում: Տարածքը նախկինում կառուցապատված և բարեկարգված է: Տարածքի առկա վիճակը՝ մեխանիկական արտադրամասեր 910 և 329.6քմ, կենտրոնական պահ. 200.5քմ, օժ.կար.պահ. 193.9քմ, վառելիքի պահեստ 58.6քմ,

շոգեքարշի դեպո 60.0քմ, հակահրդեհային 157.7քմ, տրանսֆորմատորային ենթակայան 132.9քմ, կաթսայատուն 2քմ, բիտումի, մագուրի պահեստներ 2232 քմ, արտադրամաս 655.6քմ, արտ.օժ.կառույցներ 204.8քմ, կշեռք, պահակատուն 18.7քմ, պահակատուն 13.4քմ, սան.տար. 450քմ, օժանդակ շինություններ 270.5քմ, 8.2քմ, 12.7քմ, պարիսպ 136.6քմ և 313.4քմ մակերեսով ինքնակամ շինություն: Նախատեսվող կառուցապատումը իրականացվելու է արդեն իսկ կառուցապատված տարածքում:

Տարածքի մուտքը ապահովելու է Շիրակի փողոցից:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հոդմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30 օC, բացարձակ մաքսիմումը հասնում է $+42$ օC: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, օC

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	12.0

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	60

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը – 70 կգ/մ²: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը միջին, մաքսիմալ օրական												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24	26	32	43	52	27	13	10	13	26	28	22	316
21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/քմ:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-Էրեբունի մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %								
	քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	3	10	13	16	20	26	9	3	78
	2.0	2.1	2.2	2.8	2.6	2.3	2.7	3.4	
IV	7	14	8	18	18	16	13	6	50
	3.1	2.9	2.4	3.5	3.0	3.0	4.1	3.4	
VII	17	31	3	9	16	13	7	4	40
	5.5	5.9	2.2	2.4	2.1	2.5	2.7	4.6	
X	5	18	10	11	19	22	10	5	70
	2.7	2.3	1.8	2.5	2.2	2.2	2.8	3.7	

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը և ամպամած օրերի քանակը բերված են 2.5 – 2.7 աղյուսակներում:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 2.5.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ2												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	700

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.6.

Տնողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	2696

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ագրո”)

Աղյուսակ 2.7.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	39

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 2.8 – 2.9 աղյուսակներում:

Կլիմայական բնութագիրը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.8.

Օդի ջերմաստիճանը, օC										Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը		Քամի	
ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հինգօրյակի						Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (օC) ժամանակահատվածում, երբ միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան՝							
ապահովվածություն															
0.98	0.92	0.98	0.92	միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամպլիտուդա	0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	գերակշռող ուղղությամբ ընկած տեղումների քանակը փետրվար ամիսներին	արագություններից առավելագույնը, ըստ ժամերի, մ/վրկ
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	70	140	159	78	68	132	60	Հվ	2.6
							-2.4	1.0	1.8						

Կլիմայական պարամետրերը տարվա տաք ժամանակահատվածում, Երևան-Էրեբունի

Աղյուսակ 2.9.




Օդի ջերմաստիճանը, օC					Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումներ, մմ		Քամի	
ապահովվածություն		քաղաքական առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական ամպլիտուդա						
0.95	0.99							միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին
32	34	42	33	15.6	45	28	154	51	Հվ	2.1

2.2 Օդային ավազան




Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Աղյուսակ 2. Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում

Որոշվող նյութերը (դիտակայանների քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա (մգ/մ ³)	ՍԹԿ միջին օրական (մգ/մ ³)
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.067 (դիտ. N18)	18	-	0.020	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.088 (դիտ. N18)	175	-	0.018	0.04
Փոշի (7)	2.387 (դիտ. N18)	694	34	0.126	0.15
Գետնամերձ օդոն (7)	0.257 (դիտ. N19)	53	1	0.010	0.03

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.3 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիտորինգի կողմից, որի տվյալները 2014 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ5-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

3. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները),

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է արտադրական գործընթացների ցուցանիշների և ռեժիմի վերահսկողությունը,

- II կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է գազալցումը:

Նախատեսվող գազալցման կայանը նախատեսված է շահագործել շուրջօրյա ռեժիմով: Ցերեկային ժամերին միջոցառումները իրականացվում են անմիջապես ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից: Մնացած ժամանակ՝ հերթափոխի պատասխանատուի կողմից:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,

- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

4.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:

- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 10խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 100քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 328 խմ ծավալով հողի բերրի շերտը կկուտակվի տարածքում պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգով, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները՝
- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը և որակական հատկանիշների վատթարացումը:
- Ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը 600կգ քանակով կպահվի պոլիէթիլենային պարկերում հարթակի վրա և շինարարական աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:
- տարածքը կբարեկարգվի:

4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական գործընթացին ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի

		միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի անջրթափանց սեպտիկ հոր, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար:

	վտանգներ	Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
--	----------	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար

			ստուգում		
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

9.7. այլ պահանջներ	• Նախագիծը մշակել նախքան առեկտիվ «Գազայրում Արմենիա» ՓԲԸ -ի 21.02.2019թ. հ. 22-13588 ու 207473-19 եզրակացությունների և որոշմաների մասին» «Ճանապարհային ռադիկալություն» ծառայություն 12.06.2019թ. հ. 17-3-3274 և ՀՀ քաղաքացիության, տեղի բնակիչների և հրդեհային անվտանգության տեսչական մարմին 07.08.2019թ. հ. #SU/09.2.2/3817-19 եզրակացություններով նշված պահանջներին համապատասխանությունը: • Տարածքում ենթակառուցված է նախատեսված արհեստական ջրամբարի կառուցման, սպասարկման և այլ սպասարկման շինություններ: • Հատակագծային լուծումները մշակել համապատասխան պատվիրատուի առաջադրանքի:
10. Գողմաստում գտնվող շենքերի և շինությունների ջանքման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը	Առկա ինքնազննման շինությունների մասնակի կամ ամբողջական ջրաների և համակարգի կառուցվածքների առաջադրանքի:
11. Ստորգետնյա, կիսաօդային և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները	---
12. (*) Ինժեներական զանցեր և սարքավորումներ	Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու զանցերի նկատմամբ
12.1. (*) ցամաքային տարածքում, կոյուղի, տաք ջրամատակարարում	Բաժանորդ է (նախագծի մասնակցություն կազմակերպության տեղեկական պատմություն)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Բաժանորդ է (նախագծի մասնակցություն կազմակերպության տեղեկական պատմություն)
12.3. (*) գազամատակարարում	21.02.2019թ. հ. 04/19 (նախագծի մասնակցություն կազմակերպության տեղեկական պատմություն)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մատակարար կոյուղու (ներառյալ դիստանդոր) տեղադրիչը	---
12.5. ֆուլլ հոսանքներ	---
12.6. արգելափակումներ	---
13. Տարածքի ինժեներական մախապատրաստում	Կազմակերպելու առաջադրանքի ընդհանուր մաս:
14. Բարեկարգում	Կառուցվածքային միջոցառումներ, ընդհանուր մասնակցություն կազմակերպության տեղեկական պատմություն
15. Ընդարարական նյութեր	Մեծագույն, սպառիչ, քարե ջուր և երեսապատման բարձրորակ նյութեր:
16. Պաշտպանական կառուցվածքներ	---
17. Հակահրդեհային պահանջներ	Նախագիծը համապատասխանում է հրդեհային անվտանգության պահանջներին:
18. Հաշվարկների և քննարկման տեղակայման խմբի պաշտպանության միջոցառումներ	---
19. Երթակային միջավայրի պահպանում	---
20. Ընդարարության կազմակերպում	Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը նկատի ունենալով կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԲԾ ենթակետ 44.1 կետի պահանջները, ինչպես նաև» Երևան քաղաքի քաղաքապետի 16.03.2012թ. հ. 405-Ն որոշման սահմանված կառուցվածքային պահանջները:
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	Երկու տարի, • Աշխատանքային նախագիծ •
22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ	ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 Պետական համալիր փորձաքննություն:
23. Միջանկյալ համաձայնեցում	ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 Պետական համալիր փորձաքննություն:
24. Համարակազմի քննարկումներ	---
25. Համաձայնեցումներ	• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:
26. Փոստային բաժանորդային պահանջներին տեղադրում	---
27. Այլ պայմաններ	Նախագծի կազմի և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված N 2 Պետական համալիր փորձաքննություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Կ.Տ.



Հ.ՄԱՐԴՈՒԹՅՈՒՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԶԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԴԵԿԱՎԱՐ**

« _____ » 2019թ.

N: _____

Հարտադրագետ Գ. Խաչատրյանին
Ք. Վանաձոր, Տարին 2, ՔՇՀ-3 58/3

Խաչատրյանին Ձեր 06.08.2019թ. գիտովի

Հարգելի պարոն Խաչատրյան

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և երդնալի անվտանգության տեսչական
մարմինը քննարկել է ք. Երևան, Շենգավիթի վ/շ, Շիրակի փող. հ. 47/12 հասցեում
նախատեսվող ԱԳԼՃԿ-ի էսքիզային նախագծի լրամշակված տարբերակին
տեղեկացնում է, որ էսքիզի հետագա քննարկման համար Ձեզ անհրաժեշտ է
ներկայացնել օրինակի կառուցման աշխատանքային նախագծերը:

Հարգանքով

 Electronic signature

X *Shakhbazyan G.S.*

ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ

Signed by: SHAKHBAZ'YAN GEGAM 2903870918

Դատարար Ա. Խաչատրյան
ձև. 000 44 0317

0024, Երևան, Դավթաշեն 4, Ա. Մկրտչյանի փող. 105/8, էլ. փոստ: att@shakhtest-agravik.com

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐԿԱԾ Է սեփական ձեռքով ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

(սեփականության կամ օգտագործման)

"Շաքարաշերտ" ՍՊԸ

(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Զ. Զեփուհե

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Երևանի քաղաք ԳԴ

ՆԿԱՏՄԱՄԲ

Յեփուհե Բաղդասարյան 28.03.03թ. 605-Ա; 29.11.10թ. 5489-Ա; 11.02.15թ. 338-Ա ք-ՇԿԻ:
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

Նախքան 19.09.08թ. 9463 ժամանակ, պատվ-ի: 24 հազ. դր-ի 64 հազարով: ՀԻՍՏԱՆ ԿՐՍ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԵՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
01-011-3-Շ-2 ՄԱՏՅԱՆԻ 104 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐԿՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՈՒՄՈՒՄ:

ՂԵԿԱԿԱՐ


Ս. Մանուկյան
(ստորագրությունը)



« 23 » 02 2019 թ.

2771858

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ





Հ.Բ.Պ.


Ռ. ԶԱԿԱՆ


Կատարող *[Signature]*
(ստորագրություն)



UdemyZnati







ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-011-0206-0004
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ արթուածաբերական
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ թործարանի ֆաբրիկայի համար
 ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱՓԸ (հա) 5,1846
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ անփախստաբեր

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 01-011-0206-0004-007; 020
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ արթուածաբերական
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ փախստաբեր շենք
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) 744,7
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ անփախստաբեր

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հ/Հ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ
1		Շենքի շենքեր		

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ Շենքի մեջ 313,4 ք.մ. շենք, արթուածաբեր, արթուածաբեր, արթուածաբեր, արթուածաբեր;

Կատարող Ս. Բաղդասարյան
 (ստորագրություններ)



Ս. Բաղդասարյան
Ս. Բաղդասարյան

